



COVID-19 դեմ պատվաստանյութեր. հաճախակի տրվող հարցեր

ՊԱՏՎԱՍՏԱՆՅՈՒԹԻ ԸՆԴՈՒՆՈՒՄ



Ինչպե՞ս կարող եմ պատվաստել

Պատվաստանյութերը հասանելի են Լոս Անջելեսի շրջանի հարյուրավոր վայրերում, որոնք են՝ կլինիկաներ, դեղատներ, դպրոցներ և այլ հասարակական վայրեր: Տեսանքի պայմաններում պատվաստումը հասանելի է այն մարդկանց համար, ովքեր անկարող են տնից դուրս գալ: Շատ տեղերում նախօրոք ժամադրություն չեն պահանջում:

Տեղանքը գտնելու համար այցելեք ph.lacounty.gov/howtogetvaccinated կայքէջ: Եթե օգնության կարիք ունեք, կարող եք զանգահարել **Հանրային Առողջության Վարչության Պատվաստման Զանգերի Կենտրոն** 1-833-540-0473 համարով շաբաթը 7 օր՝ առավոտյան 08:00-ից երեկոյան 08:30-ը: Նրանք կարող են կազմակերպել տնային պայմաններում պատվաստումը, անվճար տեղափոխել պատվաստման վայր կամ օգնել փոխադրամիջոցի և հաշմանդամություն ունեցող անձանց համար նախատեսված այլ ծառայությունների հարցում: Դուք կարող եք նաև պատվիրել պատվաստման ծառայություն տանը ph.lacounty.gov/vaxathome կայքէջի միջոցով: Տեղեկատվությունը հասանելի է նաև մի քանի լեզուներով 24/7՝ 2-1-1 հեռախոսահամարով:

Ես պե՞տք է վճարեմ COVID-19-ի դեմ պատվաստանյութը ստանալու համար

Ոչ: Եթե Դուք ապահովագրություն ունեք, Ձեր բժիշկը կամ դեղատունը կարող է Ձեր ապահովագրական ընկերությունից վճար գանձել պատվաստանյութը տալու համար: Բժշկական ապահովագրություն չունեցող մարդիկ նույնպես կարող են անվճար ստանալ COVID-19 պատվաստանյութը: Ոչ մեկի համար սեփական գրպանից վճարումներ չկան:

Արդյո՞ք ինձ կհարցնեն իմ ներգաղթի կարգավիճակի մասին, երբ ես ստանամ COVID-19 պատվաստանյութը

Ոչ: COVID-19 պատվաստանյութը տրամադրվում է անվճար՝ անկախ ներգաղթի կարգավիճակից: Ձեր բժշկական տվյալները գաղտնի են, և COVID-19 պատվաստանյութ ստանալը չի ազդում Ձեր ներգաղթի կարգավիճակի վրա: Պատվաստում ստանալու համար Ձեզ հարկավոր չէ անձը հաստատող փաստաթուղթ կամ Ձեր գործատուից տեղեկանք: Ներգաղթի վերաբերյալ հարցերի դեպքում այցելեք Ներգաղթային Գործերի Գրասենյակի կայքէջ՝ oia.lacounty.gov, կամ զանգահարեք 800-593-8222 հեռախոսահամարով:

Արդյո՞ք ես պետք է հայտնեմ իմ բջջային հեռախոսահամարը կամ Էլեկտրոնային փոստի հասցեն

Ոչ: Երբ Դուք պատվաստվեք, Ձեզ կխնդրեն նշել Էլեկտրոնային փոստի հասցեն կամ բջջային հեռախոսահամարը: Այս տեղեկատվությունը կներառվի Կալիֆորնիայի Նահանգի պատվաստումների գրանցամատյանում (CAIR), որպեսզի Դուք կարողանաք ստանալ COVID-19-ի դեմ պատվաստումների մասին թվային տեղեկանք: Այն կարող է նաև օգտագործվել՝ ուղարկելու համար հիշեցումներ, երբ COVID-19-ի դեմ պատվաստանյութի այլ դեղաչափեր ստանալու ժամանակը գա: Պատվաստումների մասին թվային գրանցման քարտը Ձեր պատվաստման կարգավիճակն ապացուցելու անվճար և հարմար միջոց է: Սա հատկապես օգտակար է այն ժամանակ, երբ Դուք կորցնում եք Ձեր պատվաստումների սպիտակ քարտը: Պատվաստանյութ ստանալու համար Ձեզ հարկավոր չէ տրամադրել Ձեր Էլ. փոստի հասցեն կամ բջջային





COVID-19 դեմ պատվաստանյութեր. հաճախակի տրվող հարցեր

ՊԱՏՎԱՍՏԱՆՅՈՒԹԻ ԸՆԴՈՒՆՈՒՄ



հեռախոսահամարը, սակայն այս տեղեկատվությունը չտրամադրելը կարող է ավելի ուշ դժվարացնել պատվաստման թվային գրանցման քարտը ստանալը: Դուք կարող եք իմանալ ավելին թվային պատվաստումների գրանցման մասին հետևյալ հասցեով՝ myvaccinerecord.cdph.ca.gov, և գաղտնիության պահպանության մասին՝ [այստեղ](#):

Որտե՞ղից կարող եմ ստանալ իմ պատվաստումների գրանցման քարտի պատճենը

CDC COVID-19-ի դեմ պատվաստումների հաշվառման քարտը (սպիտակ քարտ) պատվաստումների պաշտոնական ապացույցն է: Յուրաքանչյուրին պետք է տրվի մեկ հատ, երբ նա պատվաստվի: **Խնդրում ենք պահպանել այն ապահով տեղում, քանի որ այն հնարավոր չէ փոխարինել:** Մտածեք լուսանկարելու կամ դրա պատճենն ունենալու մասին:

Յուրաքանչյուր ոք*, ով պատվաստվել է Կալիֆորնիայում, կարող է պահանջել COVID-19-ի դեմ պատվաստումների թվային գրանցման քարտը myvaccinerecord.cdph.ca.gov կայքում: Սա նույնպես պաշտոնական գրանցում է: Այն կարելի է ներբեռնել Google Pay թվային դրամապանակից՝ Android հեռախոսով կամ Apple Health հավելվածից՝ iPhone-ով: Կարող եք նաև հեռախոսով լուսանկարել Էկրանին երևացող Ձեր COVID-19 պատվաստման թվային գրանցման քարտը (screenshot) և պահպանել այն Ձեր լուսանկարներում: Դուք կարող եք ձեռք բերել Ձեր ընտանիքի յուրաքանչյուր անդամի թվային գրանցման քարտը, նույնիսկ եթե դուք օգտագործել եք նույն Էլ.փոստի հասցեն կամ բջջային հեռախոսահամարը, երբ նրանք պատվաստվել են: Լրացուցիչ տեղեկությունների համար այցելեք [Պատվաստումների գրանցումներ](#) կայքէջ:

*Եթե Դուք պատվաստվել եք դաշնային գործակալության կողմից (օրինակ՝ Պաշտպանության Նախարարության, Ամերիկայի Բնիկների Առողջապահական Ծառայություն կամ Վետերանների Հարցերով Վարչություն), ապա դուք պետք է պատվաստման գրանցման տեղեկանքի համար դիմեք անմիջապես գործակալությանը:

Արդյո՞ք ես պետք է համաձայնություն տամ իմ երեխային պատվաստելու համար

18 տարեկանից ցածր տարիքի երեխաներին պատվաստելու համար անհրաժեշտ է ծնողների/խնամակալների կամ նրանց խնամքով զբաղվող անձանց համաձայնությունը: Եթե Դուք չեք կարող ներկա գտնվել, Դուք կարող եք Ձեր համաձայնությունը տալ հեռախոսով, տեսախոսով կամ գրավոր: Ստուգեք այն վայրի համաձայնության պահանջները, որտեղ Դուք նախատեսում եք գնալ: Եթե դա Հանրային Առողջության կողմից ղեկավարվող վայր է, կարող եք տեսնել պահանջները և ներբեռնել համաձայնության ձևը ph.lacounty.gov/howtogetvaccinated կայքում. սեղմեք [preparing for your visit](#) («պատրաստվեք Ձեր այցին») կամ զանգահարեք Պատվաստումների Չանգերի Կենտրոն 1-833-540-0473 հեռախոսահամարով (ամեն օր՝ առավոտյան 8:00-ից երեկոյան 8:30-ը):

Գործում են որոշ բացառություններ: 15 տարեկան և ավելի բարձր տարիքի անչափահասները, ովքեր ինքնաբավ են (օրինակ՝ ճանաչվել են որպես լրիվ գործունակ կամ ինքնաբավ անչափահաս, ամուսնացած են կամ նախկինում ամուսնացած են եղել) կարող են տալ իրենց սեփական համաձայնությունը: Եթե դուք խնամատար, բարեկամ-խնամող կամ կարճաժամկետ բնակելի թերապևտիկ ծրագրի (STRTP) աշխատակից եք, կարող եք համաձայնություն տալ, քանի դեռ խնամատարության տակ գտնվող երեխան համաձայն է: Եթե դուք խնամատար եք (foster





COVID-19 դեմ պատվաստանյութեր.

հաճախակի տրվող հարցեր

ՊԱՏՎԱՍՏԱՆՅՈՒԹԻ ԸՆԴՈՒՆՈՒՄ

caregiver) և համաձայնություն չէք տալիս, բայց Ձեր ինսամատարության տակ գտնվող երեխան ցանկանում է պատվաստանյութ ստանալ, նա կարող է դիմել իր փաստաբանին:

Ի՞նչ փաստաթղթեր պետք է բերեմ, որպեսզի պատվաստեմ իմ երեխային

Որոշ վայրերում պատվաստումներ ստանալու համար կարող է պահանջվել անձը հաստատող փաստաթուղթ՝ լուսանկարներով: Եթե Դուք ինսամակալ եք ինսամատար ընտանիքում գտնվող երեխայի համար, ով չունի լուսանկարով անձը հաստատող փաստաթուղթ, ինդրեք նրան կապվել իր փաստաբանի հետ: Մեկ այլ տարբերակ է՝ դիմել Լոս Անջելես Շրջանի Հանրային Առողջության Վարչությանը պատկանող հաստատություն, որտեղ լուսանկարով անձը հաստատող փաստաթուղթ չի պահանջվում:

Համաձայնության մասին տեղեկությունների համար տե՛ս վերևում: Ծանոթացե՛ք այն վայրի պահանջներին, որտեղ դուք նախատեսում եք գնալ: Լոս Անջելես Շրջանի Հանրային Առողջության Վարչության պատվաստման վայրի պահանջների մասին տեղեկությունների համար այցելե՛ք ph.lacounty.gov/howtogetvaccinated կայք. սեղմե՛ք ["preparing for your visit"](#) («պատրաստվե՛ք ձեր այցին») կամ զանգահարե՛ք Պատվաստումների Չանգերի Կենտրոն 1-833-540-0473 հեռախոսահամարով (ամեն օր՝ առավոտյան 8:00-ից երեկոյան 8:30-ը):

Արդյո՞ք ես պետք է այնուամենայնիվ պատվաստվեմ, եթե արդեն վարակվել եմ COVID-19-ով

Այո: Դուք պետք է պատվաստվե՛ք, նույնիսկ եթե Դուք արդեն ունեցել եք COVID-19, քանի որ պատվաստանյութը կարող է օգնել կանխել COVID-19-ի վերադարձը:

COVID-19-ով վարակվելը ապահովում է որոշակի պաշտպանություն COVID-19-ի հետագա հիվանդություններից, որը երբեմն կոչվում է [«ընական անվարակունակություն»](#): Բայց պաշտպանվածության մակարդակը, որ մարդիկ ստանում են վարակվելու արդյունքում, տարբեր է լինում: Դա կախված է նրանից, թե որքան թեթև կամ ծանր է եղել նրանց հիվանդությունը, որքան ժամանակ է անցել նրանց COVID-19-ից և ինչ տարիքի են եղել: Ներկայումս չկա որևէ թեստ, որը կարող է վստահորեն պարզել՝ արդյո՞ք մարդը պաշտպանված է COVID-19-ով վարակվելուց: Մարդիկ, ովքեր արդեն հիվանդացել են COVID-19-ով և չեն պատվաստվել ապաքինվելուց հետո, [ավելի հավանական է, որ կրկին կվարակվեն COVID-19](#), քան նրանք, ովքեր պատվաստվել են ապաքինվելուց հետո:

Եթե ներկայումս ունեք COVID-19, սպասե՛ք, մինչև ապաքինվե՛ք և ավարտե՛ք մեկուսացման ժամանակահատվածը՝ պատվաստելու համար: Սա արվում է, որպեսզի դուք չվարակե՛ք բուժաշխատողներին և այլ մարդկանց, երբ գնում եք Ձեր պատվաստվելու:

Դուք կարող եք դիտարկել COVID-19-ով առաջին անգամ վարակվելուց հետո 3 ամիս սպասելը՝ սկսելու կամ շարունակելու համար COVID-19-ի դեմ պատվաստումների շարքը կամ խթանիչ ստանալը: Դա պայմանավորված է նրանով, որ դուք դժվար թե կրկին վարակվե՛ք COVID-19-ով՝ վարակից հետո առաջին 3 ամիսների ընթացքում: Վարակման և պատվաստանյութ ստանալու միջև ավելի երկար ժամանակահատվածը կարող է նաև հանգեցնել ավելի լավ իմունային արձագանքի:





COVID-19 դեմ պատվաստանյութեր. հաճախակի տրվող հարցեր ՊԱՏՎԱՍՏԱՆՅՈՒԹԻ ԸՆԴՈՒՆՈՒՄ



Եթե Դուք հիվանդ եք եղել երեխաների կամ չափահասների բազմահամակարգային բորբոքային համախտանիշով (MIS-C կամ MIS-A), խոսեք Ձեր բժշկի հետ՝ նախքան COVID-19-ի դեմ պատվաստանյութ ստանալը:

Կարո՞ղ եմ ստանալ COVID-19-ի դեմ պատվաստանյութը մեկ այլ պատվաստանյութի հետ միաժամանակ

Այո: Չափահասները և 6 ամսական և ավելի բարձր տարիքի երեխաները կարող են COVID-19-ի դեմ պատվաստանյութ ստանալու հետ միաժամանակ ստանալ այլ պատվաստանյութեր, ինչպիսիք են՝ պոլիոմելիտը, կարմրուկը, կապույտ հազը և գրիպը: Եթե Ձեր երեխան COVID-19-ի դեմ պատվաստավում մի վայրում, որտեղ չեն առաջարկվում նրան անհրաժեշտ այլ պատվաստանյութեր, Դուք կարող եք ցանկացած պահի գնալ այլ վայր՝ դրանք ստանալու համար: Պատվաստումների միջև սպասելու կարիք չկա:

Կարո՞ղ եմ սովորական բժշկական հետազոտություն կամ ստուգիչ թեստավորում անցնել, եթե ես նոր եմ պատվաստվել COVID-19-ի դեմ

Սովորական բժշկական հետազոտությունների կամ զննումների մեծ մասը կարող են իրականացվել COVID-19 պատվաստանյութ ստանալուց առաջ կամ հետո:

Նշում: Եթե Դուք պետք է անցնեք սովորական մամոգրաֆիա և վերջերս պատվաստվել եք COVID-19-ի դեմ, հարցրեք Ձեր բժշկին, թե որքան ժամանակ պետք է սպասել նախքան մամոգրաֆիա անցնելը: COVID-19-ի դեմ պատվաստանյութ ստացած մարդկանց մոտ կարող է հայտնվել ավշային հանգույցների այտուց (լիմֆադենոպաթիա) թևատակում այն հատվածին մոտ, որտեղ նրանց ներարկում են արել: Այդ այտուցը բնական է, որ մարմինը ստեղծում է պաշտպանություն COVID-19-ից: Այս ժամանակավոր այտուցը կարող է պատկերել մամոգրաֆիայի սխալ ցուցանիշ, ուստի կարևոր է անձնակազմին տեղեկացնել Ձեր պատվաստման մասին: Լրացուցիչ մանրամասների համար տե՛ս Կրծքագեղձի պատկերման միության [առաջարկները COVID-19-ի դեմ պատվաստանյութ ստացող կանանց համար](#):

COVID-19-ի դեմ պատվաստանյութը կարող է նաև ազդել տուբերկուլյոզը (TB) ցույց տվող թեստերի որոշ տեսակների արդյունքների վրա. տես CDC-ի կայքէջը՝ [COVID-19-ի դեմ պատվաստումները և այլ բժշկական ընթացակարգեր](#):

Ինչպե՞ս պետք է պատրաստվեմ իմ պատվաստման այցելությանը

- Չմոռանաք վերցնել անհրաժեշտ փաստաթղթերը և ձեր էլեկտրոնային փոստի հասցեն կամ բջջային հեռախոսահամարը, եթե Դուք ունեք այն: Եթե Դուք ընդունելության ժամադրություն ունեք, կարդացեք տեղեկությունները հաստատման էլեկտրոնային նամակում: Եթե դուք որևէ հարց ունեք, օգտակար կլինի դրանք գրի առնելը:
- Եթե դուք կանոնավոր կերպով չեք ընդունում առանց դեղատոմսի դեղամիջոցներ (օրինակ՝ իբուպրոֆեն, ասպիրին, ացետամինոֆեն կամ հակահիստամիններ), մի ընդունեք դրանք նախքան COVID-19-ի դեմ պատվաստում ստանալը՝ փորձելով կանխել կողմնակի ազդեցությունները: Սակայն, եթե դուք դրանք պարբերաբար ընդունում եք այլ





COVID-19 դեմ պատվաստանյութեր. հաճախակի տրվող հարցեր ՊԱՏՎԱՍՏԱՆՅՈՒԹԻ ԸՆԴՈՒՆՈՒՄ

պատճառներով, Դուք պետք է շարունակեք դրանք ընդունել նախքան պատվաստում ստանալը:

- **Ձեզ հետ վերցրեք դիմակ, նախաճաշ և ջուր:** Շոգ օրերին, եթե Դուք այցելում եք բացօթյա տարածք, կրեք գլխարկ և թեթև հագուստ:
- Խորհուրդների համար, թե ինչպես խոսել Ձեր երեխայի հետ COVID-19-ի դեմ պատվաստման մասին և պատրաստել նրան պատվաստում ստանալու համար, տե՛ս [Երեխաներին պատվաստելը](#) Լոս Անջելեսի Շրջանի Հանրային Առողջության Վարչության [COVID-19 պատվաստանյութի ՀՏՀ](#)-ում:

Ի՞նչ պետք է անեմ պատվաստվելուց հետո

- Համոզվեք, որ Ձեզ պատվաստում անողը թարմացրել է Ձեր պատվաստման քարտը (կամ տվել է Ձեզ այն, եթե դա Ձեր առաջին դեղաչափն է):
- Պլանավորեք պատվաստանյութի հաջորդ դեղաչափը ստանալը, եթե այն Ձեզ անհրաժեշտ է, նախքան պատվաստման վայրից հեռանալը:
- Իմացեք, որ Դուք կարող եք [կողմնակի բարդություններ](#) ունենալ՝ պատվաստանյութ ստանալուց հետո: Կողմնակի բարդություններ և ծանր ալերգիկ հակազդեցություններ հազվադեպ են նկատվում: Կողմնակի բարդությունների մասին հաղորդելու համար կարող եք գրանցվել [v-safe](#)-ում:

Որտեղի՞ց կարող եմ ստանալ հավելյալ տեղեկություններ



- Այս ՀՏՀ-ները կամ COVID-19 պատվաստանյութի այլ թեմաների վերաբերյալ ՀՏՀ-ները տպելու կամ տեսնելու համար սկանավորեք QR կոդը կամ այցելեք՝ [COVID-19-ի դեմ պատվաստանյութի մասին ՀՏՀ](#):
- [VaccinateLACounty.com](#)՝ ներառյալ [COVID-19-ի դեմ պատվաստման ժամանակացույցները](#)՝ գրաֆիկական պատկերներով, որոնք ցույց են տալիս, յուրաքանչյուր դեղաչափի ներարկման ժամանակը և տեղեկատվություն այն մասին, թե [ինչպես պատվաստել](#):
- Ստանալ [COVID-19-ի դեմ պատվաստումները](#) CDC-ի կայքէջում:
- Դիմեք Ձեր բժշկին, եթե հարցեր ունեք:

